30
ՀՈՒԼԻՍԻ
2020

Luys Lnyu®

# ՎԻԵՆՆԱՅԻ ԵՎ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐԸ ԵԱՀԿ ՄԽ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2016-2018 ԵՎ 2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ՎԻԵՆՆԱՅԻ ԵՎ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐԸ ԵԱՀԿ ՄԽ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2016-2018 ԵՎ 2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 1

1. ԵԱՀԿ ՄԽ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2016Թ. ԱՊՐԻԼԻՑ ՄԻՆՉԵՎ 2018Թ. ՄԱՅԻՍ ..... 2

2. ԵԱՀԿ ՄԽ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2018Թ. ՄԱՅԻՍԻՑ 2020Թ. ՀՈՒԼԻՍ ..... 5

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 9

ԵԱՀԿ ՄԽ ԲՈԼՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2016-2020ԹԹ. .. 10

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2016թ. Ապրիլյան պատերազմի ժամանակ Ադրբեջանի նախահարձակ գործողությունների և կրած պարտության հետևանքով ԼՂ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի տրամաբանությունը էական փոփոխությունների ենթարկվեց: Ռազմաճակատում ունեցած հաղթանակը արդյունավետ ձևով կապիտալիզացվեց հայկական դիվանագիտության կողմից, ինչի արդյունքում նախ Վիեննայում, այնուհետև Սանկտ Պետերբուրգում բանակցային գործընթացի առաջնահերթություն դարձան վստահության ամրապնդման և սահմանային միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրման, ԵԱՀԿ նախագահի անձնական ներկայացուցչի առաքելության ընդլայնման վերաբերյալ պայմանավորվածությունները:

Սա նշանակում էր սահմանին ստատուս քվոյի ամրապնդում, ռազմական գործողությունների բացառում և նախահարձակ կողմին հստակորեն տարբերակելու հնարավորություն: Այսինքն՝ այս պայմանավորվածությունների արդյունքում Ադրբեջանը զրկվելու էր ուժի կամ ուժի սպառնալիքի միջոցով բանակցային գործընթացի վրա ազդելու բոլոր հնարավորություններից, հետևաբար ստատուս քվոյի պահպանումը ավելի մեծ հնարավորություններ էր ստեղծելու Արցախի Հանրապետության փաստացի գոյությունը ամրապնդելու համար: Թերևս հենց դա էր պատճառը, որ Ադրբեջանի նախագահը սկսեց բողոքել, որ իրեն պարտադրում են ճանաչել ԼՂ անկախությունը:

2018-ին Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո փոխվեց նաև ԼՂ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի տրամաբանությունը: Բանակցային գործընթացից դուրս մղվեցին Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները, փոխարենը սկսվեց ակտիվորեն շրջանառվել Դուշանբեի պայմանավորվածությունների, երկու կողմերի միջև ուղիղ կապի և ժողովուրդներին խաղաղության նախապատրաստման հեղհեղուկ գաղափարները, որոնք իրենց անարդյունավետությունը լիարժեքորեն ապացուցեցին հուլիսին տեղի ունեցած ռազմական գործողությունների ժամանակ: Համենայն դեպս, այս մասին են վկայում ԵԱՀԿ ՄԽ համանախագահների պաշտոնական հայտարարություններն ու մամուլի հաղորդագրությունները:

Երբ հուլիսյան զարգացումների ժամանակ Հայաստանի իշխանությանը սկսեցին ակտիվորեն քննադատել Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները բանակցային օրակարգից դուրս մղելու և այդպիսով

ադրբեջանական սադրանքների համար նպաստավոր պայմաններ ստեղծելու մեջ, վերջիններս սկսեցին արդարանալ, թե իրենք չեն բանակցային օրակարգից դուրս մղել Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները, որ նախկինում էլ դրանք ոչ միշտ են տեղ գտել ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հայտարարություններում:

Այս արդարացումների ողջ մերկությունը բացահայտելու նպատակով մենք փորձել ենք ուսումնասիրել 2016թ. ապրիլից մինչև 2020թ. հուլիս ԵԱՀԿ ՄԽ համանախագահների բոլոր պաշտոնական հայտարարություններն ու մամուլի հաղորդագրությունները: Այսպես, 2016թ. ապրիլյան ռազմական գործողություններից մինչև 2018թ. ապրիլ-մայիսին տեղի ունեցած իշխանափոխությունն ընկած ժամանակահատվածում ԵԱՀԿ ՄԽ հայտարարությունները համեմատել ենք 2018թ. մայիսից մինչև 2020թ. հուլիսը արված հայտարարությունների հետ: Փորձել ենք հասկանալ, թե նախորդ իշխանության օրոք ԵԱՀԿ ՄԽ համանախագահները իրենց պաշտոնական հայտարարություններում քանի անգամ են անդրադարձել ինչպես կոնկրետ Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածություններին, այնպես էլ Անջեյ Կասպերշիկի առաքելության ընդլայնման, վստահության ամրապնման և սահմանային միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրման հարցերին: Նաև փորձել ենք հասկանալ, թե այդ հարցերին իրենց պաշտոնական հայտարարություններում ՄԽ համանախագահները քանի անգամ են անդրադարձել Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո:

## 1. ԵԱՀԿ ՄԽ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2016Թ. ԱՊՐԻԼԻՑ ՄԻՆՉԵՎ 2018Թ. ՄԱՅԻՍ

Քանի որ Ապրիլյան պատերազմից հետո վստահության մեխանիզմների մասին առաջին հիշատակումը համանախագահները արել են 2016թ. մայիսի 12-ին տարածած իրենց հայտարարության մեջ, իսկ առաջին պայմանավորվածությունը ձեռք է բերվել ՀՀ և Ադրբեջանի նախագահների միջև 2016թ. մայիսի 16-ին՝ Վիեննաում, ապա դիտարկել ենք 2016թ. մայիսի 12-ից մինչև 2018թ. մայիսը (Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը) ընկած ժամանակահատվածի հայտարարությունները**: Այս ընթացքում ԵԱՀԿ ՄԽ համանախագահները տարածել են 24 պաշտոնական հայտարարություն և մամուլի հաղորդագրություն**:

Այն հայտարարությունները, որոնցում ուղղակիորեն հիշատակվում են Վիեննայի և/կամ Սանկտ Պետերբորգի պայմանավորվածությունները, 10-ն են[1], ընդ որում վերջին հիշատակումը եղել է Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից ընդամենը 2 ամիս առաջ 2018թ. փետրվարի 11-ին ԵԱՀԿ ՄԽ համանախագահների տարածած հայտարարության մեջ[2], որը փաստացիորեն նախքան 2018թ. ապրիլ-մայիսյան իրադարձությունները ՄԽ տարածած վերջին պաշտոնական հայտարարությունն էր: Սա խոսում է այն մասին, որ Ապրիլյան պատերազմից ի վեր, ընդհուպ մինչև Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունը, Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները եղել են ԼՂ բանակցային գործընթացի առաջնահերթությունը և պարբերաբար շրջանառվել համանախագահների կողմից:

Այդ նույն ժամանակահատվածում եղել են նաև ՄԽ որոշ այլ հայտարարույթուններ, որոնցում ուղղակիորեն չեն հիշատակվել Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները, սակայն նշվել է կա՛մ Կասպերշիկի առաքելության ընդլայնման, կա՛մ վստահության ամրապնդման և սահմանային միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրման մասին, որոնք անմիջականորեն բխում են Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի

---

[1] Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group,
PARIS, 3 June 2016, https://www.osce.org/mg/244441 (այցելվել է 28.07.2020թ.):
OSCE Chairperson Steinmeier meets with Minsk Group co-chairs, discusses results of St. Petersburg summit of Presidents, BERLIN, 24 June 2016, https://www.osce.org/mg/248616 (այցելվել է 28.07.2020թ.):
Statement by Co-Chairs of OSCE Minsk Group, NEW YORK, 22 September 2016,
https://www.osce.org/mg/266881 (այցելվել է 28.07.2020թ.):
Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW / WASHINGTON D.C. / PARIS, 26 October 2016, https://www.osce.org/mg/277091 (այցելվել է 28.07.2020թ.):
Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, HAMBURG, 8 December 2016 https://www.osce.org/mg/287531 (այցելվել է 28.07.2020թ.):
Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW/ PARIS/ WASHINGTON, 9 January 2017,
https://www.osce.org/mg/292991 (այցելվել է 28.07.2020թ.):
Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MUNICH, 17 February 2017,
https://www.osce.org/mg/300591 (այցելվել է 28.07.2020թ.):
Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, YEREVAN, 29 March 2017,
https://www.osce.org/minsk-group/308521 (այցելվել է 28.07.2020թ.):
Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, VIENNA, 7 December 2017, https://www.osce.org/minsk-group/361286 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group following their meetings with the Presidents of Azerbaijan and Armenia, BAKU / YEREVAN, 11 February 2018, https://www.osce.org/minsk-group/371396 (այցելվել է 28.07.2020թ.):

[2] Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group following their meetings with the Presidents of Azerbaijan and Armenia, BAKU / YEREVAN, 11 February 2018, https://www.osce.org/minsk-group/371396 (այցելվել է 28.07.2020թ.):

պայմանավորվածությունների տրամաբանությունից. այսպիսի հայտարարությունների թիվը 5-ն է[3]:

Այսինքն՝ ստացվում է, որ 2016թ. մայիսից 2018թ. մայիսն ընկած ժամանակահատվածում ՄԽ համանախագահների տարածած 24 պաշտոնական հայտարարություններից և մամուլի հաղորդագրություններից 15-ում՝ հայտարարությունների շուրջ 63%-ի դեպքում, ուղղակիորեն կամ անուղղակիորեն հիշատակվում են Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները: Մնացած այն 9 հայտարարությունները, որոնցում այս պայմանավորվածություններին անդրադարձ չի կատարվում, սովորաբար վերաբերում են ՄԽ համանախագահների կազմակերպչական աշխատանքներին, սահմանային մի քանի միջադեպերի, այլ ոչ թե բանակցային գործընթացին: Այս տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2016-ի մայիսից 2018-ի մայիս ժամանակահատվածում բանակցային գործընթացի առանցքում եղել են հենց Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները, ինչը լիարժեքորեն արտահայտվել է ՄԽ պաշտոնական հայտարարություններում:

Բանակցային գործընթացի օրակարգում Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունների առկայությունը և դրանց պարբերաբար հիշատակումը ՄԽ համանախագահների հայտարարություններում հայկական դիվանագիտության համար բավականին նպաստավոր իրավիճակ էր ստեղծել: Այն հաճախ թույլ էր տալիս խուսափել հակամարտության կարգավորման դետալների, մասնավորապես տարածքային զիջումների մասին քննարկումներից, քանի դեռ Ադրբեջանը խոչընդոտում էր վստահության ամրապնդման և սահմանային միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրման, ԵԱՀԿ նախագահի անձնական ներկայացուցչի առաքելության ընդլայնման վերաբերյալ որոշումների իրականացմանը:

[3] Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, VIENNA, 12 May 2016, https://www.osce.org/mg/239696 (այցելվել է 28.07.2020թ.):
Joint Statement of the Minister of Foreign Affairs of the Russian Federation, Secretary of State of the United States of America and State Secretary for Europe Affairs of France, VIENNA, 16 May 2016, https://www.osce.org/mg/240316 (այցելվել է 28.07.2020թ.):
OSCE Chairperson Steinmeier meets with Minsk Group co-chairs, discusses results of St. Petersburg summit of Presidents, BERLIN, 23 June 2016, https://www.osce.org/cio/248281 (այցելվել է 28.07.2020թ.):
Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW, 16 November 2017, https://www.osce.org/minsk-group/357011 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, KRAKOW, 18 January 2018, https://www.osce.org/minsk-group/367121 (այցելվել է 28.07.2020թ.):

Միաժամանակ, Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները հայկական կողմի բանակցային դիրքերն ամրապնդեցին նաև այն տեսանկյունից, որ Ադրբեջանը սկսվեց միջազգային հանրության կողմից ընկալվել որպես ապակառուցողական կողմ, որը հրաժարվում էր կատարել նախկինում ստանձնած իր պարտավորությունները: Պատահական չէ, որ հենց այս շրջանում ադրբեջանական կողմը սկսեց ավելի ակտիվորեն կիրառել «սուբստանտիվ» բանակցությունների անհրաժեշտության մասին թեզը, որի տակ վերջինս պատկերացնում էր առաջին հերթին Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունների դուրսմղումը բանակցային գործընթացից: Այս հարցում չհասնելով որևէ լուրջ հաջողության՝ Ադրբեջանի իշխանությունները սկսեցին դժգոհել միջազգային հանրությունից՝ Արցախի անկախությունը ճանաչելու նպատակով իրենց վրա ճնշում գործադրելու համար:

## 2. ԵԱՀԿ ՄԽ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2018Թ. ՄԱՅԻՍԻՑ 2020Թ. ՀՈՒԼԻՍ

Այս հատվածում անդրադառնանք այն հարցին, թե ինչպիսի իրավիճակ ունենք 2018թ. իշխանափոխությունից հետո: **2018թ. մայիսից 2020թ. հուլիսը ՄԽ համանախագահները տարածել են 26 պաշտոնական հայտարարություն կամ մամուլի հաղորդագրություն:** Դրանցից և ոչ մեկում ուղղակիորեն չեն հիշատակվում Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները: Այդ հայտարարություններից միայն մեկում[4] հիշատակվում է Կասպերշիկի առաքելության ընդլայնման վերաբերյալ 2016թ. պայմանավորվածությունների մասին, ևս մեկում հիշատակվում է վստահության ամրապնդման մեխանիզմների մասին[5]: Այսինքն՝ 26 հայտարարություններից միայն 2-ում (հայտարարությունների 8%-ում), այն էլ անուղղակի ձևով է անդրադարձ կատարվում Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածություններին, ընդ որում վերջին անգամ՝ միայն 2019թ. դեկտեմբերին: Սա խոսում է այն մասին, որ 2018թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո բանակցային օրակարգից ամբողջությամբ դուրս են մղվել Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները, այդ թվում

[4] Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair countries, BRATISLAVA, 5 December 2019, https://www.osce.org/minsk-group/441242 (այցելվել է 28.07.2020թ.):

[5] Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group following their meeting with the Foreign Ministers of Armenia and Azerbaijan, BRUSSELS, 12 July 2018, https://www.osce.org/minsk-group/387683 (այցելվել է 28.07.2020թ.):

գրեթե դուրս են մղվել Կասպերշիկի առաքելության ընդլայնման և վստահության մեխանիզմների ամրապնդման նախաձեռնությունները:

Փոխարենը 2018թ. մայիսից մինչև այժմ ՄԽ համանախագահների հայտարարություններից 9-ում[6] հիշատակվում են Դուշամբեի պայմանավորվածությունների և կողմերի միջև ուղիղ կապի մասին, որոնց կասկածելի «արդյունավետությունը» ամբողջությանմբ ի չիք դարձավ հուլիսյան ռազմական գործողությունների ժամանակ, և վարչապետն ու ԱԳՆ-ն ստիպված էին իրենց հայտարարություններում նորից հիշել վստահության ամրապնդման մեխանիզմների և սահմանային միջադեպերի մոնիթորինգի, Կասպերշիկի առաքելության ընդլայնման, այն է՝ Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունների մասին:

2018թ. մայիսից 2020թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում ՄԽ համանախագահների պաշտոնական հայտարարություններից և մամուլի հաղորդագրություններից 12-ում[7] նշվում է ժողովուրդներին խաղաղության

---

[6] Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, YEREVAN / BAKU, 2 November 2018, https://www.osce.org/minsk-group/401951 (այցելվել է 28.07.2020թ.):
Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, Armenia, and Azerbaijan, MILAN, 6 December 2018, https://www.osce.org/minsk-group/405479 (այցելվել է 28.07.2020թ.):
Joint Statement by the Foreign Ministers of Armenia and Azerbaijan and the Co-Chairs of the OSCE Minsk Group, VIENNA, 29 March 2019, https://www.osce.org/minsk-group/415643 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement of the OSCE Minsk Group Co-Chairs, WASHINGTON, 20 June 2019, https://www.osce.org/minsk-group/423734 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, NEW YORK CITY, 25 September 2019, https://www.osce.org/minsk-group/433121 (այցելվել է 28.07.2020թ.):
Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair countries, BRATISLAVA 5, December 2019, https://www.osce.org/minsk-group/441242 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW / PARIS / WASHINGTON, 19 March 2020, https://www.osce.org/minsk-group/448837 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW / PARIS / WASHINGTON, 30 June 2020, https://www.osce.org/minsk-group/455866 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW / PARIS / WASHINGTON, 13 July 2020, https://www.osce.org/minsk-group/457225 (այցելվել է 28.07.2020թ.):

[7] Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, Armenia, and Azerbaijan, MILAN, 6 December 2018, https://www.osce.org/minsk-group/405479 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, PARIS, 16 January 2019, https://www.osce.org/minsk-group/409220 (այցելվել է 28.07.2020թ.):
Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, VIENNA, 1 March 2019, https://www.osce.org/minsk-group/412880 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group on the Upcoming Meeting of President Aliyev and Prime Minister Pashinyan, MOSCOW, PARIS, WASHINGTON, 9 March 2019, https://www.osce.org/minsk-group/413813 (այցելվել է 28.07.2020թ.):

նախապատրաստելու և խաղաղությանը նպաստող միջավայրի ձևավորման մասին, այն պարագայում, երբ, ինչպես փորձը ցույց տվեց, այս ուղերձը ուղղված էր բացառապես հայկական կողմին. համենայն դեպս այն դրական արձագանք էր ստանում միայն ՀՀ իշխանությունների կողմից, մինչդեռ Ադրբեջանը որդեգրել էր տրամագծորեն հակառակ քաղաքականություն: Ուշագրավ է, որ 2016-2018թթ. հայտարարություններում ժողովրդներին խաղաղության նախապատրաստելու և խաղաղությանը նպաստող միջավայրի ձևավորման վերաբերյալ հիշատակումները ընդամենը 2-ն են[8], այն էլ հիմնականում փոխկապակցված են Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունների հետ:

Ավելի մտահոգիչ է այն հանգամանքը, որ Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո անհամեմատ ավելի հաճախակի են դարձել ՄԽ համանախագահների հայտարարություններում այսպես կոչված «Ղարաբաղի ադրբեջանական համայնքի» և վերջինիս «ներկայացուցիչների» հետ հանդիպումների մասին հիշատակումները: Ընդհանուր առմամբ 2018թ. մայիսից 2020թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում ՄԽ համանախագահների պաշտոնական հայտարարություններից 3-ում[9] անդրադարձ է կատարվում «Ղարաբաղի

Joint Statement by the Foreign Ministers of Armenia and Azerbaijan and the Co-Chairs of the OSCE Minsk Group, VIENNA, 29 March 2019, https://www.osce.org/minsk-group/415643 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement of the OSCE Minsk Group Co-Chairs, WASHINGTON, 20 June 2019, https://www.osce.org/minsk-group/423734 (այցելվել է 28.07.2020թ.):
OSCE Chairperson-in-Office Lajčák receives Minsk Group Co-Chairs, welcomes prisoner Exchange, BRATISLAVA, 28 June 2019, https://www.osce.org/chairmanship/424328 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement of the OSCE Minsk Group Co-Chairs, VIENNA/BRATISLAVA, 29 June 2019, https://www.osce.org/minsk-group/424346 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, NEW YORK CITY, 25 September 2019, https://www.osce.org/minsk-group/433121 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, YEREVAN / BAKU, 17 October 2019, https://www.osce.org/minsk-group/436265 (այցելվել է 28.07.2020թ.):
Joint Statement by the Foreign Ministers of Armenia and Azerbaijan and the Co-Chairs of the OSCE Minsk Group, GENEVA, 30 January 2020, https://www.osce.org/minsk-group/445114 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MOSCOW / PARIS / WASHINGTON, 30 June 2020, https://www.osce.org/minsk-group/455866 (այցելվել է 28.07.2020թ.):

[8] OSCE Chairperson Steinmeier meets with Minsk Group co-chairs, discusses results of St. Petersburg summit of Presidents, BERLIN, 23 June 2016, https://www.osce.org/cio/248281 (այցելվել է 28.07.2020թ.):
Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, MUNICH, 17 February 2017, https://www.osce.org/mg/300591 (այցելվել է 28.07.2020թ.):

[9] Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, YEREVAN / BAKU, 2 November 2018, https://www.osce.org/minsk-group/401951 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, YEREVAN / BAKU, 30 May 2019, https://www.osce.org/minsk-group/421322 (այցելվել է 28.07.2020թ.):
Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, YEREVAN / BAKU, 17 October 2019, https://www.osce.org/minsk-group/436265 (այցելվել է 28.07.2020թ.):

ադրբեջանական համայնքին» կամ վերջինիս «ներկայացուցիչների» հետ հանդիպումներին:

Հատկապես վտանգավոր է 2019թ. հոկտեմբերի 17-ի հայտարարությունը[10], որտեղ նշվում է ԼՂ «դե ֆակտո» իշխանությունների հետ համանախագահների հանդիպման մասին, այնուհետև հաջորդ իսկ նախադասության մեջ նշվում է Բաքվում այսպես կոչված «ԼՂ Ադրբեջանական Համայնքի Նախագահի» հետ ՄԽ համանախագահների հանդիպման մասին: Այս հայտարարության մեջ փաստորեն ՄԽ համանախագահները փորձ են անում միևնույն հարթության մեջ դնել ԼՂ օրինական իշխանություններին և այսպես կոչված «ԼՂ ադրբեջանական համայնքի նախագահին», ինչը հայկական կողմի համար չափազանց վտանգավոր միտում է: Ընդ որում, «Ադրբեջանական Համայնք» բառակապակցությունը վերջին 2 հայտարարություններում նշվում է մեծատառով, ի տարբերություն նախկինում նշվող «ադրբեջանական համայնքներ» կամ «ադրբեջանական համայնքի ներկայացուցիչներ» բառակապակցությունների: Այսինքն փորձ է արվում «Ադրբեջանական համայնքին» ինստիտուցիոնալ բնույթ հաղորդել:

Ուշագրավ է, որ 2016թ. ապրիլից 2018թ. մայիսն ընկած ժամանակահատվածում համանախագահների պաշտոնական հայտարարություններում գրեթե առհասարակ բացակայում են «ԼՂ ադրբեջանական համայնքի» մասին հիշատակումները, առավել ևս այն ժամանակ գոյություն չուներ այսպես կոչված «ԼՂ ադրբեջանական համայնքի նախագահը»: Այդ ժամանակահատվածում միայն մեկ հայտարարության մեջ է նշվում բաքվում ԼՂ ադրբեջանական համայնքի հետ ՄԽ համանախագահների հանդիպման մասին[11]:

Փաստորեն, Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները ԵԱՀԿ ՄԽ համանախագահների պաշտոնական հայտարարություններում վերջին անգամ հիշատակվել են 2018թ. փետրվարին՝ Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից 2 ամիս առաջ: Դրանից հետո այդ պայմանավորվածությունները երբևէ չեն հիշատակվել ՄԽ պաշտոնական հայտարարություններում: Փոխարենը 2018թ. աշնանը Դուշամբեում Փաշինյանի և Ալիևի հանդիպումից հետո ՄԽ հայտարարություններում հաճախակի անդրադարձ է կատարվել այսպես կոչված «Դուշամբեի» պայմանավորվածություններին և կողմերի

[10] Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, YEREVAN / BAKU, 17 October 2019, https://www.osce.org/minsk-group/436265 (այցելվել է 28.07.2020թ.):
[11] Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group, BAKU, 19 June 2017, https://www.osce.org/minsk-group/323961 (այցելվել է 28.07.2020թ.):

միջև ուղիղ կապին: Այսպիսով ԵԱՀԿ ՄԽ հովանու ներքո պաշտոնապես ձեռք բերված հստակ պայմանավորվածություններին փոխարինեցին ոչ ինստիտուցիոնալ «վերելակային» պայմանավորվածությունները, որոնք բնականաբար չէին կարող խաղաղության համար երկարատև և կայուն միջավայր ստեղծել:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵԱՀԿ ՄԽ համանախագահների պաշտոնական հայտարարությունների և մամուլի հաղորդագրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2018թ. իշխանափոխությունից հետո ՀՀ իշխանությունները, որոնք հայտարարում էին ԼՂ բանակցությունները սեփական կետից սկսելու մասին, ոչ միայն չկարողացան ամրապնդել 2016թ. ռազմական գործողություններից հետո հայկական դիվանագիտության հաղթանակները, այլև բանակցային գործընթացի օրակարգից դուրս մղեցին Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները. այդ թվում՝ հրադադարի պահպանման և սահմանային միջադեպերի հետաքննության, Կասպերշիկի առաքելության ընդլայնման մասին ձեռք բերված համաձայնությունները: Փոխարենը բանակցային օրակարգը լցրեցին ժողովուրդներին խաղաղության նախապատրաստելու մասին խիստ հակասական ձևակերպումներով, առաջնային կարգավիճակում հայտնվեց այսպես կոչված «ԼՂ ադրբեջանական համայնքը»:

Իսկ ի՞նչ իրավիճակ ունենք այսօր՝ Ադրբեջանի սանձազերծած հերթական ռազմական գործողություններից հետո: Իշխանությունները, փոխանակ օգտվելու ՋՈՒ-ի գրանցած փայլուն հաջողություններից, Ադրբեջանի թույլ տված կոպիտ սխալներից (ՀԱԷԿ-ի վրա հարձակվելու սպառնալիք) և բանակցային գործընթացում վերականգնելու նախկին 2 տարիների ընթացքում կորսված դիրքերը՝ առաջնային պլան մղելով Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները, փորձում են իրենց քարոզչությունը կառուցել այն թեզի վրա, թե իբր Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները այնքան էլ էական չեն, դրանց վերաբերյալ հիշատակումները ՄԽ հայտարարություններում նախկինում էլ հազվադեպ են եղել և այլն: Թեև վերջին հայտարարություններում, այդ թվում՝ կառավարության հուլիսի 23-ի նիստի ժամանակ ԼՂ հակամարտության վերաբերյալ վարչապետի ներկայացրած դիրքորոշումներում[12] նշվում է հրադադարի պահպանման արդյունավետ միջազգային մոնիթորինգային մեխանիզմների անհրաժեշտության

[12] Վարչապետը ներկայացրեց հայ-ադրբեջանական սահմանին վերջին լարվածության և ԼՂ խաղաղ գործընթացի վերաբերյալ ՀՀ դիրքորոշումը, 23.07.2020, https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2020/07/23/Cabinet-meeting-Speech/ (այցելվել է 28.07.2020թ.):

մասին, սակայն կրկին չեն հիշատակվում Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները:

Միաժամանակ, հայկական կողմն իր պաշտոնական հայտարարություններում և տարբեր պաշտոնյաների շուրթերով շարունակում է կրկնել ժողովուրդներին խաղաղության նախապատրաստելու, փոխզիջումների, բոլոր կողմերի համար ընդունելի լուծման մասին ձևակերպումները, փոխանակ բարձրաձայնելու կոնկրետ Ադրբեջանին խաղաղության նախապատրաստելու և/կամ պարտադրելու հարցերը: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է պաշտոնական հայտարարություններում կոնկրետ հիշատակել Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի արդեն իսկ ձեռք բերված պայմանավորվածությունները, այլ ոչ թե փորձել նոր լուծումներ և ձևակերպումներ գտնել: Բացի այդ, հարկավոր է հստակորեն ընդգծել, որ բանակցային օրակարգից հենց Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունների դուրսմղումն է հնարավոր դարձրել սահմանային վերջին լարվածությունը, ուստի հետագայում նմանատիպ միջադեպերից խուսափելու համար հարկավոր է դրանք վերադարձնել օրակարգի առաջնահերթությունների շարք: Միայն դրանից հետո կստեղծվեն պայմաններ, որոնք թույլ կտան խոսել ժողովուրդներին խաղաղության նախապատրաստելու, փոխզիջումների և այլնի մասին:

Արտաքին քաղաքականության մեջ, այն էլ այնպիսի կենսական գործընթացում, ինչպիսին ԼՂ հակամարտության շուրջ բանակցություններն են, պոպուլիզմը կարող է կործանարար հետևանքներ ունենալ: Որքան էլ որ Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի պայմանավորվածությունները ձեռք են բերվել նախկին իշխանությունների օրոք, դրանք իրենց կարևորությամբ բավական մեծ նշանակություն ունեն Հայաստանի և Արցախի համար, ուստի հարկավոր է ընդունել այդ փաստը և ուղղել բանակցային գործընթացում նախկինում թույլ տված սխալները:

## ԵԱՀԿ ՄԽ ԲՈԼՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2016-2020ԹԹ.

Ստորև ներկայացնում ենք 2016թ. ապրիլից ցայսօր ԵԱՀԿ ՄԽ համանախագահների տարածած բոլոր պաշտոնական հայտարարությունների ու մամուլի հաղորդագրությունների ակտիվ հղումները՝

1. 2 April 2016 https://www.osce.org/mg/231216
2. 5 April 2016 https://www.osce.org/mg/231386
3. 5 April 2016 https://www.osce.org/cio/231431
4. 12 May 2016 https://www.osce.org/mg/239696

5. 16 May 2016 https://www.osce.org/mg/240316
6. 3 June 2016 https://www.osce.org/mg/244441
7. 23 June 2016 https://www.osce.org/cio/248281
8. 24 June 2016 https://www.osce.org/mg/248616
9. 22 September 2016 https://www.osce.org/mg/266881
10. 26 October 2016 https://www.osce.org/mg/277091
11. 8 December 2016 https://www.osce.org/mg/287531
12. 9 January 2017 https://www.osce.org/mg/292991
13. 17 February 2017 https://www.osce.org/mg/300591
14. 26 February 2017 https://www.osce.org/mg/301866
15. 29 March 2017 https://www.osce.org/minsk-group/308521
16. 18 May 2017 https://www.osce.org/minsk-group/318171
17. 19 June 2017 https://www.osce.org/minsk-group/323961
18. 5 July 2017 https://www.osce.org/minsk-group/327866
19. 12 July 2017 https://www.osce.org/minsk-group/328746
20. 23 September 2017 https://www.osce.org/minsk-group/345336
21. 7 October 2017 https://www.osce.org/minsk-group/348471
22. 16 October 2017 https://www.osce.org/minsk-group/350091
23. 16 November 2017 https://www.osce.org/minsk-group/357011
24. 7 December 2017 https://www.osce.org/minsk-group/361286
25. 18 January 2018 https://www.osce.org/minsk-group/367121
26. 11 February 2018 https://www.osce.org/minsk-group/371396
27. 23 April 2018 https://www.osce.org/minsk-group/378637
28. 15 May 2018 https://www.osce.org/minsk-group/381283
29. 14 June 2018 https://www.osce.org/minsk-group/384456
30. 12 July 2018 https://www.osce.org/minsk-group/387683
31. 27 September 2018 https://www.osce.org/minsk-group/397700
32. 2 November 2018 https://www.osce.org/minsk-group/401951
33. 6 December 2018 https://www.osce.org/minsk-group/405479
34. 16 January 2019 https://www.osce.org/minsk-group/409220
35. 1 March 2019 https://www.osce.org/minsk-group/412880
36. 9 March 2019 https://www.osce.org/minsk-group/413813
37. 29 March 2019 https://www.osce.org/minsk-group/415643
38. 15 April 2019 https://www.osce.org/minsk-group/417281
39. 30 May 2019 https://www.osce.org/minsk-group/421322
40. 20 June 2019 https://www.osce.org/minsk-group/423734
41. 28 June 2019 https://www.osce.org/chairmanship/424328
42. 29 June 2019 https://www.osce.org/minsk-group/424346

43. 25 September 2019 https://www.osce.org/minsk-group/433121
44. 17 October 2019 https://www.osce.org/minsk-group/436265
45. 5 December 2019 https://www.osce.org/minsk-group/441242
46. 30 January 2020 https://www.osce.org/minsk-group/445114
47. 19 March 2020 https://www.osce.org/minsk-group/448837
48. 31 March 2020 https://www.osce.org/minsk-group/449410
49. 21 April 2020 https://www.osce.org/minsk-group/450508
50. 30 June 2020 https://www.osce.org/minsk-group/455866
51. 13 July 2020 https://www.osce.org/minsk-group/457225
52. 15 July 2020 https://www.osce.org/minsk-group/457399
53. 24 July 2020 https://www.osce.org/minsk-group/458068

*«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:*

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*